

Հարգելի պարոն Շահգելոյան

Ձեր 12.02.2009 թվականի N ՇՄ-212 հանձնարարականի համաձայն ներկայացնում եմ ՅՅ Սյունիքի մարզում 2009 թվականի հունիս ամսին կայանալիք ՅՅ կառավարության արտագնա նիստի օրակարգի 2 նախագիծ.

1. «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության համակարգի բարեփոխման, սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման, իրազեկման համակարգի արդիականացման, արդիական գիտատեխնիկական հայտնագործությունների ներդրման ծրագիրը հաստատելու մասին»: Նախագիծը Ձեզ ներկայացվել է մեր 2712.2008թ. N 12/Ն-306 գրությամբ,

2. «ՅՅ ԱԻՆ «ՍՊԱԾ» գործակալության հարավային և հյուսիսային տարածքային ստորաբաժանումներ ստեղծելու, ՅՅ կառավարության 15.05.2008թ. N 531-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»: Նախագիծը ՅՅ ԱԻՆ է ներկայացվել մեր 29.01.2009թ. N 12/Ն-23 գրությամբ:

Եվս երկու նախագիծ՝ 1. «ՅՅ ԱԻՆ «ՍՊՅՐԾ» ՊՈԱԿ-ին տարածք հատկացնելու մասին», 2. «Տոլորսի ջրամբարի պատվարի խոցելիության գնահատման, Տոլորսի ջրամբարի աջակողմյան լանջի սողանքի երկրորդային սեյսմիկ վտանգի կանխարգելման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», կներկայացվի մեկշաբաթյա ժամկետում:

Առդիր՝ 41 էջ:

Հարգանքով՝
ՊԵՏ

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

Հարգելի պարոն Շահգելյան

Ձեր 12.02.2009 թվականի N ՇՄ-212 հանձնարարականի համաձայն, ի լրումն մեր 06.03.2009թ. N 12/Ն-74 գրության, ներկայացնում եմ ՀՀ Սյունիքի մարզում 2009 թվականի հունիս ամսին կայանալիք ՀՀ կառավարության արտագնա նիստի օրակարգի 4 նախագիծ.

1. «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության համակարգի բարեփոխման, սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման, իրազեկման համակարգի արդիականացման, արդիական գիտատեխնիկական հայտնագործությունների ներդրման ծրագիրը հաստատելու մասին»: Նախագիծը Ձեզ ներկայացվել է մեր 27.12.2008թ. N 12/Ն-306 գրությամբ,

2. «ՀՀ ԱԻՆ «ՍՊԱԾ» գործակալության հարավային և հյուսիսային տարածքային ստորաբաժանումներ ստեղծելու, ՀՀ կառավարության 15.05.2008թ. N 531-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»: Նախագիծը ՀՀ ԱԻՆ է ներկայացվել մեր 29.01.2009թ. N 12/Ն-23 գրությամբ,

3. «ՀՀ ԱԻՆ «ՍՊՀրԾ» ՊՈԱԿ-ին տարածք հատկացնելու մասին»,

4. «Տոլորսի ջրամբարի ձախակողմյան լանջի սողանքի երկրորդային սեյսմիկ վտանգի և պատվարի խոցելիության գնահատման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»:

Խնդրում ենք Ձեր հանձնարարականը՝ նախագծերը շահագրգիռ մարմինների քննարկմանը ներկայացնելու համար:

Առդիր՝ 25 էջ:

Հարգանքով՝
ՊԵՏ

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

2009 թվականի N -Ն

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ, ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ, ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի «4.3.13. Արտակարգ իրավիճակների կանխարգելում» բաժնի 1-ին կետի 1.5. ենթակետի կատարումն ապահովելու նպատակով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» N 429 որոշմամբ հաստատված ծրագրի` Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համակարգող միջգերատեսչական հանձնաժողով:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին.

ա) մեկամսյա ժամկետում շահագրգիռ նախարարությունների հետ համաձայնեցնել սեյսմիկ ռիսկի նվազեցման համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կազմը և ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի համաձայնեցմանը,

բ) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել սեյսմիկ ռիսկի նվազեցման համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կանոնադրությունը:

3. Հաստատել «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության» ազգային դիտացանցի արդիականացում ծրագիրը` համաձայն հավելվածի:

4. «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության» ազգային դիտացանցի արդիականացում ծրագրի աշխատանքներն իրականացնել ըստ ժամանակացույցի` համաձայն հավելվածի:

5. Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացնել 54000.0 հազ. դրամ:

6. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին` 2009 թվականից սկսած յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն սույն որոշման 3-րդ կետով հաստատված ծրագրի կատարման ընթացքի մասին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԾՐԱԳԻՐ

«ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ»
ԱԶԳԱՅԻՆ ԴԻՏԱՑԱՆՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

I. Ծրագրի հիմնական նպատակները.

1. Նպաստել Հայաստանի եւ տարածաշրջանի երկրների կայուն զարգացմանը;
2. Հայաստանում բարձր սեյսմիկ վտանգի եւ ռիսկի գոտում սեյսմիկ ցանցի վերականգնում եւ զարգացում;
3. Հայաստանում երկրաբանական, երկրաֆիզիկական, երկրաքիմիական դիտարկումների ցանցերի վերականգնում եւ զարգացում:
4. Ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման եւ տարածաշրջանում կործանիչ երկրաշարժերի հետեւանքների կանխարգելման նպատակով՝ հակամիջոցների ձեռնարկման համար տվյալների փոխանակման ցանցի զարգացում;
5. Սեյսմոլոգիայի, սեյսմակայուն շինարարության, շրջակա միջավայրի, միջուկային փորձարկումների մոնիտորինգի եւ սեյսմիկ վտանգի եւ ռիսկի գնահատման բնագավառում հիմնարար եւ կիրառական հետազոտությունների համար բարձրորակ տվյալների բազայի ստեղծում;
6. Երկրի եւ տարածաշրջանի գիտնականների, կառավարման մարմինների, ինչպես նաեւ արտակարգ իրավիճակներում որոշում ընդունող անձանց միջեւ համագործակցության հաստատում;
7. Ժամանակակից տեխնոլոգիաների, սարքավորումների եւ ծրագրային փաթեթների, սեյսմոլոգիայի, սեյսմիկ վտանգի եւ ռիսկի գնահատման բնագավառում նորագույն մեթոդոլոգիայի կիրառմամբ երիտասարդ հետազոտողների ուսուցում եւ վերապատրաստում:

Կարձաժամկետ նպատակներ.

Երկրաշարժերի պարամետրերի արագ եւ ճշգրիտ որոշում, տեխնոլոգիական պայթյունների մոնիտորինգ, Միջին Արեւելքում միջուկային պայթյունների մոնիտորինգ, բարձրորակ տվյալների բազայի ստեղծում, սեյսմիկ վտանգի եւ ռիսկի գնահատման բնագավառում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում գիտական հետազոտություններում, երիտասարդ հետազոտողների ուսուցում եւ վերապատրաստում:

Միջին եւ երկարաժամկետ նպատակներ.

Սարդկային կորուստների ռիսկի նվազեցում, տնտեսության վնասի նվազեցում, մոնիտորինգային մեթոդոլոգիայի զարգացում, արհեստական ջրամբարներում, հանքավայրերում կատարվող պայթյուններով հարուցված սեյսմիկության կանխատեսում եւ գնահատում: Հայաստանի տարածքում վաղ ահազանգման համակարգի տեխնիկական նախապայմանների ստեղծում:

II. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայաստանում գործող թե տարածքային սեյսմիկ կայանները եւ թե երկրաֆիզիկական, երկրաքիմիական դիտակայանները ֆիզիկապես հնացած են, սպառել են իրենց ռեսուրսները, չեն համապատասխանում արդի տեխնոլոգիական պահանջներին: Ոչ բարվոք վիճակում են գտնվում նաեւ Հայաստանի եւ ԼՂՀ տարածքում գործող հինգ հեռաչափական ցանցերը: Խնդիրներ կան կապված հեռահաղորդման, տեղեկատվության օպերատիվ փոխանցման, մշակման եւ վերծանման, մարտկոցային տնտեսության թարմացման ուղղությամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է արդիականացնել «ՍՊԱԾ»-ի Ազգային դիտացանցը, որը կապահովի ինչպես չափումների իրականացումը նոր ժամանակակից թվային տեխնիկայի միջոցներով, այնպես էլ ստացված տեղեկատվության օպերատիվ On-line փոխանցմանը, որը կնպաստի սեյսմիկ վտանգի եւ ռիսկի առավել ճիշտ գնահատմանը:

Ծրագրի իրականացումը կապահովի.

1. Սեյսմաչափության, երկրաբանության, երկրաֆիզիկայի, երկրաքիմիայի եւ համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում վերջին նվաճումներով զինված սեյսմիկ մոնիտորինգի անցկացում;

2. Հայաստանի բոլոր շահագրգիռ կազմակերպություններին հիմնարար եւ կիրառական հետազոտությունների անցկացման համար բարձրորակ տվյալների բազայի ստեղծում;
3. Հայաստանի տվյալների հավաքման եւ մշակման կենտրոնի կատարելագործում եւ տարածքային սեյսմոլոգիական, երկրաբանական, երկրաֆիզիկական տվյալների արագ փոխանակում Հայաստանում եւ արտասահմանում;
4. Տարածքային սեյսմիկ կայանների եւ տվյալների հավաքագրման եւ մշակման կենտրոնի, տեղական հեռաչափական սեյսմոլոգիական ցանցերի սարքային, ծրագրային ապահովման համապատասխանեցումը միջազգային չափանիշներին;
5. Տվյալների մշակման եւ վերլուծության մեթոդոլոգիայի բարելավում;

Օժանդակությունը

Ժամանակակից նորմերին համապատասխան դիտացանցի վերակազմումը եւ արդիականացումը կիրականացվի «ՍՊԱԾ»-ի Ազգային դիտացանցի շրջանակներում: «ՍՊԱԾ»-ը հիմնադրվել է 1991թ. եւ նրա հիմնական նպատակներն են.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ վտանգի մոնիտորինգի ապահովումը;
2. Տարածքների սեյսմիկ վտանգի եւ ռիսկի գնահատումը;
3. Սեյսմիկ ռիսկի նվազեցումը
4. Սեյսմիկ վտանգի հետ կապված այլ երկրորդային վտանգների գնահատումը:

Ներկայումս «ՍՊԱԾ»-ի Ազգային դիտացանցը բաղկացած է \approx 150 դիտակայաններից:

Ստեղծված ժամանակակից սեյսմիկ ցանցը կհանդիսանա 1999թ-ի հունիսի 10-ին Կառավարության թիվ 429 որոշումով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ ռիսկի նվազեցում» երկարաժամկետ պետական ծրագրի կարելորագույն եւ հիմնական բաղադրիչը:

Ծրագիրը նախատեսված է 2009 – 2011 թվականի ժամանակահատվածի համար:

III. Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության կողմից ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի մոնիտորինգի ապահովման, սեյսմիկ վտանգի և սեյսմիկ ռիսկի գնահատման և սեյսմիկ վտանգի նվազեցման համար անհրաժեշտ սարքավորումների ցանկ 2009թ.

NN	անվանումը	քանակը	մեկ միավորի արժեքը (US D)	ընդամենը (US D)	նշումներ
1.	Տարածաշրջանային թվային սեյսմիկ կայան GURALP	10	11 000	110 000	
2.	Համակարգիչ P IV	10	1300	13 000	
3.	Մալուխներ			3 800	
4.	Մարտկոց 5HK 125	100	210	21 000	ներկայացված են զործարանային գները
5.	Հիմք (KOH, NaOH)	1000 կգ	2	2 000	
6.	Ռադիոհեռախոս «Kenwood THF 6A»	10	400	4 000	
7.	Հեռախոս-ֆաքս	4	500	2 000	
8.	Հեռահաղորդման համակարգեր	15	300	4 500	
9.	Սարքերի ներկում, մաքսավորում, տեղափոխում			18 000	
10.	Ընդամենը			178 300	

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության կողմից ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի մոնիտորինգի ապահովման, սեյսմիկ վտանգի և սեյսմիկ ռիսկի գնահատման և սեյսմիկ վտանգի նվազեցման համար անհրաժեշտ սարքավորումների ցանկ

2010թ.

NN	անվանումը	քանակը	մեկ միավորի արժեքը (US D)	ընդամենը (US D)	նշումներ
1	Մագնիտոմերական կայան GSM 19 (Կանադա)	12	7500	90 000	ներկայացված են գործարանային գները
2	Մալուխներ			2 500	
5	Համակարգիչ P IV	10	1300	13 000	
7	Լազերային տպիչ	10	300	3 000	
8	Հեռախոս	35	40	1 400	
9	Մարտկոց 5HK 125	50	210	10 500	
10	Հեռահաղորդման համակարգեր	25	300	7 500	
11	Հիդրոդինամիկական կայան	13	1800	23 400	սարքի արժեքը Ռուսաստանում
12	Սարքերի ներկում, մաքսավորում, տեղափոխում			18 000	
	Ընդամենը			169 300	

Սեյմիկ պաշտպանության ազգային ծառայության կողմից ՀՀ տարածքի սեյմիկ վտանգի մոնիտորինգի ապահովման, սեյմիկ վտանգի և սեյմիկ ռիսկի գնահատման և սեյմիկ վտանգի նվազեցման համար անհրաժեշտ սարքավորումների ցանկ 2011թ.

NN	անվանումը	քանակը	մեկ միավորի արժեքը (US D)	ընդամենը (US D)	նշումներ
1	Ռադոնամետրական կայան ՌՌՍ 01-03 (Ռուսաստան)	20	3000	60 000	ներկայացված են գործարանային գները
3	Մարտկոց 5HK 125	50	210	10 500	ներկայացված են գործարանային գները
4	Հիմք (KOH, NaOH)	500 կգ	2	1 000	
5	Տեսապրոեկտոր	1	4000	2 800	
6	Ռադիոկայան «IKON IC7750SP »	4	5000	20 000	
7	Սկաներ	5	300	1 500	
8	Համակարգիչ P IV	10	1300	13 000	
9	Դյուրակիր համակարգիչ	2	1500	3 000	
10	Մալուխներ			2 700	
11.	Պլոտեր	1	3000	3 000	
12.	Արեգակնային վահանակներ			20 000	
13	Սարքերի ներկում, մաքսավորում, տեղափոխում			14 900	
	Ընդամենը			152 400	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄԲՈՂԶ ԾՐԱԳԻՐԸ (US D)			500 000	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄԲՈՂԶ ԾՐԱԳԻՐԻ ԱՐԺԵՔԸ ՀՀ ԴՐԱՍՈՎ			153 500 000	1 ԱՄՆ դոլարը հավասար է 307 ՀՀ դրամ

IV. Ծրագրի իրականացման հետևանքով կունենանք հետևյալ արդյունքները՝

- կստեղծվի ժամանակակից թվային սեյսմիկ կայանների ցանց
- կբարձրանա ստացվող տեղեկատվության հավաստելիությունը և ստացման օպերատիվությունը
- կկատարվի Հայաստանի Հանրապետության Ազգային Անվտանգության Ռազմավարության պահանջը, այն է՝ միջազգային նորմերին համապատասխան մոնիտորինգի ապահովում
- արդիականացումից հետո կկատարվի դիտակայանների աշխատակազմերի օպտիմալացում, որը կունենա նաև որոշակի տնտեսական էֆեկտ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ, ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ, ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը ըստ հավելվածների նախատեսում է բյուջեում ծախսեր ենթածրագրի համար 153500 հազար դրամ, այդ թվում 54000 հազար դրամ՝ 2009թ.:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ, ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ, ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ, ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ, ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ա) Սեյսմիկ ռիսկի նվազեցմանն առընչվող աշխատանքների հետևողական կատարման, կատարվող գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական և այլ հատուկ աշխատանքների համակարգման, հսկողություն իրականացման համար նպատակահարմար է սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական հանձնաժողովի կամ սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարման կենտրոնի ստեղծումը: Սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարման կենտրոնը կարող է լինել ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնի կազմում:

Պետական հանձնաժողովը վերահսկելու և համակարգելու է սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի իրականացման աշխատանքները և ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ մշակելու է շենքերի ու շինությունների խոցելիության նվազեցման ռազմավարությունը:

Սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական հանձնաժողովի ստեղծումը նախատեսված է սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրով՝ որպես սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարման կենտրոն: Այն կարող է իրականացնել սեյսմաշրջանացման աշխատանքների լիցենզավորումը (ՀՀ Սեյսմիկ պաշտպանության մասին օրենքի պահանջ), համաձայնություն տալ գլխավոր հատակագծերին, իրականացնել տեսչական գործառույթներ սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքների նկատմամբ (սեյսմիկ շրջանացում, խոցելիության գնահատում, բնակչության ուսուցում, կառավարման մարմինների ուսուցում, պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների նախապատրաստում): Սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական հանձնաժողով կարող է արդյունավետ համագործակցել համայնքապետարանների և քաղաքաշինական հանձնաժողովների հետ:

բ) Ծրագրի մաս կազմող ենթածրագրի վերաբերյալ.

1. Հայաստանում գործող դիտակայանները ֆիզիկապես և բարոյապես հնացած են, սպառել են իրենց ռեսուրսները, չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է արդիականացնել ՍՊԱԾ-ի Ազգային դիտացանցը, ապահովելով ժամանակակից թվային տեխնիկայի և հեռահաղորդակցման միջոցներով գրանցումների և չափումների հուսալիությունն ու հավաստիությունը, տեղեկատվության շուրջօրյա on-line փոխանցումը: Դա կնպաստի սեյսմիկ վտանգի և ռիսկի ժամանակին և առավել ձիշտ գնահատմանը:

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Նախագիծը մշակել են «ՍՊԱԾ» գործակալության համակարգի աշխատակիցներ Ա. Անտոնյանը, Հ. Պետրոսյանը, Վ. Արզումանյանը, Գ. Նամայանը, Է. Բիշարյանը, Ռ. Բաղդասարյանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 15.05.2008 ԹՎԱԿԱՆԻ N 531-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի I կետի բ) ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն գործակալության հյուսիսային և հարավային տարածքային ստորաբաժանումներ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 15.05.2008 թ. N 531-Ն որոշմամբ հաստատված հավելված 3-ում կատարել հետևյալ լրացումները.

1) 15-րդ կետում «ստորաբաժանումներ» բառից առաջ լրացնել «և տարածքային» բառերը,

2) 15-րդ կետում ավելացնել նոր պարբերություն. «Իր խնդիրների ու գործառնությունների իրականացման ապահովման նպատակով գործակալությունը համակարգում է սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական ծրագրերով նախատեսված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն», «Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն», «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն», «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքները:»:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 15.05.2008թ. N 531-Ն որոշմամբ հաստատված հավելված 4-ը:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն գործակալության կառուցվածքը համաձայն հավելված 1-ի:

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ մեկամսյա ժամկետում.

ա) Կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն», «Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն», «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն», «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրություններում:

բ) Հաստատել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն գործակալության տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները:

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ

պաշտպանության ազգային ծառայություն գործակալության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների թվաքանակի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՐԶԱՊԵՏ՝

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Քարտուղարություն
2. Սեյսմիկ մոնիտորինգի և ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման վարչություն
3. Սեյսմիկ ռիսկի նվազեցման վարչություն

Տարածքային ստորաբաժանումներ

1. Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն գործակալության հյուսիսային մասնաճյուղ
2. Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն գործակալության հարավային մասնաճյուղ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 15.05.2008 ԹՎԱԿԱՆԻ N 531-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում: Այս նախագիծը լրացուցիչ միջոցներ և ծախսեր չի պահանջում, այն ենթադրում է «ՍՊԱԾ» գործակալության և «ՍՊԱԾ» ՊՈԱԿ-ների հաստիքների և միջոցների օգտագործմամբ ստեղծել տարածքային մարմիններ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 15.05.2008 ԹՎԱԿԱՆԻ N 531-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱՃԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 15.05.2008 ԹՎԱԿԱՆԻ N 531-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման նախագիծը նպատակ ունի սեյսմիկ պաշտպանության ոլորտի աշխատանքների բարելավում, գործառույթների առավել արդյունավետ իրականացում:

Պետական արդյունավետ կառավարումը կարևորվում է նաև սեյսմիկ պաշտպանության ոլորտում, որը ներառված է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթներում:

Այժմ Սեյսմիկ ռիսկի նվազեցման մեկ միասնական նպատակ հետապնդող ծառայության առանձին հիմնարկների տեսքով տարանջատումը առաջացրել է *Կադրային, Կազմակերպչական, Գործնական, Իրավական* դժվարություններ, մասնավորապես կանոնադրություններում հստակեցված չեն Համալիր ծրագրի կատարման ՊՈԱԿ-ներ-Գործակալություն փոխհարաբերությունները: Այդ հանգամանքը առաջացնում է մի շարք

խոչընդոտներ ՍՊԱԾ-ի անմիջական գործառույթների, խնդիրների լուծման ժամանակ, ընդհուպ մինչև Հայաստանի տարածքում տեղի ունեցած երկրաշարժի էպիկենտրոնային գոտում խիստ անհրաժեշտ մակրոսեյսմիկ ուսումնասիրությունները, դրանց ամբողջական փուլի կազմակերպումը (օպերատիվ գործուղումներ):

Նախագծի ներկայացումը հիմնավորվում է նաև գործակալության կանոնադրությամբ նախատեսված խնդիրների և նպատակների իրականացման համար անհրաժեշտ գործառույթների կատարման դժվարությունների տեսանկյունից:

Գործակալության առաջարկվող կառուցվածքում ներառված են «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 429 որոշմամբ և «Երևանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» ՀՀ կառավարության 07.06.1999թ. N 392 որոշմամբ հաստատված ծրագրերով նախատեսված երեք հիմնական խնդիրների՝ սեյսմիկ վտանգի գնահատման, սեյսմիկ ռիսկի գնահատման և սեյսմիկ ռիսկի նվազեցման գործառույթների կատարման կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ:

Առաջարկվող կառուցվածքային բարեփոխում և կառավարման գործառույթների կենտրոնացում, որոնք նախագիծը ենթադրում է սեյսմիկ պաշտպանության ոլորտի կիանգեցնեն համակարգի առավել կառավալելությանը, կադրայի ներուժի օպտիմալ բաշխմանը:

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Նախագիծը մշակել է «ՍՊԱԾ» գործակալության աշխատակիցներ Ա.Անտոնյանը, Հ.Պետրոսյանը, Ռ. Բաղդասարյանը, Վ. Խոնդկարյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

..... 2009 թվականի N Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՄՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատանքային անհրաժեշտ տարածքի հիմնախնդիրները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 որոշմամբ հաստատված նորմատիվները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն պետական ոչ առևտրային կազմակերպությանը վարչական շենք տրամադրելու վերաբերյալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ՝

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՄՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՄՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՌԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆԿԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՄՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է ի կատարումն ՀՀ Կոտայքի Մարզում ՀՀ կառավարության արտագնա նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի փետրվարի 12-ի N 01/15/716-09 հանձնարարականի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 որոշմամբ հաստատված նորմատիվները, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2000 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության հարավային տարածաշրջանում սեյսմիկ ռիսկի նվազեցման առաջնահերթ միջոցառումների մասին» N 270 որոշմամբ հաստատված ցանկի 5-րդ կետը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն» ՊՈԱԿ-ը չունի իրեն տրամադրված մշտական տարածք և զբաղեցնում է «Հատուկ լեռնափրկարար ծառայություն» ՓԲԸ Կապանի հատուկ փրկարարական ջոկատի կողմից ժամանակավորապես տրամադրված 51.5 քառ.մ. մակերեսով տարածք երկրորդ հարկում` բաղկացած 3 սենյակից: Նշված տարածքի մեկ սենյակն զբաղեցնում է ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենը, մյուսը` /8.4 քառ.մ/ զբաղեցնում են հաշվապահությունը /2 աշխատակից/ և կադրերի տեսուչը /1 աշխատակից/: Մնացած մեկ սենյակն զբաղեցնում են ծառայության մյուս բաժինները` ՍՎՌԳ-ը /2 աշխատակից/, դիտացանցի բաժինը/1 աշխատակից/ և ծառայության փոխտնօրենը: Այդ սենյակում են տեղադրված նաև

Ծառայության հեռաչափական համակարգի Կենտրոնական կայանը իր սարքավորումներով /S<L վահանակը, 2 համակարգիչ, սնուցման մարդկոցներ և այլն/: Միաժամանակ այդտեղ է իրականացվում ծառայության շուրջօրյա հերթապահությունը /2 աշխատակից/: Անհրաժեշտ է նշել, որ հեռաչափական համակարգը, համաձայն շահագործման տեխնիկական պայմանների, պետք է տեղադրված լինի 25 քառ.մ-ից ոչ պակաս տարածքում և ունենա երկրորդ սենյակը` 15 քառ.մ էլեկտրասնուցման սարքերի և ակունյատորների մարդկոցների համար: Կարևոր է նշել, որ նման տարածքում մարդկանց ներկայությունը, առողջական տեսանկյունից, ցանկալի չէ: Բացի այդ, ՊՈԱԿ-ը կայանների սարքերի նորոգման և պահպանման, մարդկոցների լիցքավորման և նրանց լուծույթների պատրաստման համար չունի առանձնացված տարածք:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 որոշմամբ հաստատված նորմատիվները, ստորև ներկայացվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության /գործադիր տնօրենի, փոխտնօրենի և կադրերի տեսուչի, 5 բաժինների, դիտակետի համար/ տարածքների պահանջարկի վերաբերյալ հաշվարկ.

Կարածքի անվանումը	Չափի միավորը	Աշխատողների քանակը	Յգտակար մակերեսի հաշվարկը
Վարչական աշխատողների տարածք	յուրաքանչյուր աշխատողին 4 քառ.մ	5 բաժնի աշխատողներ, ներառյալ փոխտնօրեն և կադրերի տեսուչ` 12 անձ X 4 քառ.մ	48 քառ.մ
Ղեկավարի տարածք	ընդհանուր տարածքի 15 տոկոսը	245 քառ.մ X 0.15	37 քառ.մ, ներառյալ 12 քառ.մ ընդունարան
Ընդունարաններ	յուրաքանչյուր ղեկավարին` 12 քառ.մ	2 X 12 քառ.մ	24 քառ.մ
Դահլիճ	յուրաքանչյուր աշխատողին` 0,3 քառ.մ	61 X 0.3 քառ.մ	18.3 քառ.մ
Խորհրդակցությունների սենյակ	մինչև 300 աշխատող	61	72 քառ.մ
Տեխնիկական արխիվ	մինչև 500 աշխատող	61	45 քառ.մ
Ժահեստ	մինչև 500 աշխատող	61	42 քառ.մ
Լրացուցիչ տարածք	1. դիտակետ 2. էլեկտրասնուցման սարքերի սենյակ	դիտակետի աշխատակից համաձայն նորմատիվ փաստաթղթերի	2 25 քառ.մ 15 քառ.մ

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է 11 սենյակ` 254 քառ.մ ընդհանուր մակերեսով, այդ թվում.

- 4 սենյակ 5 բաժինների աշխատողների, փոխտնօրենի և կադրերի տեսուչի համար, 48 քառ.մ ընդհանուր մակերեսով,
- 1 սենյակ դիտակետի և 2 աշխատակցի համար, 25 քառ.մ ընդհանուր մակերեսով,
- ղեկավարի սենյակ, 25 քառ.մ ընդհանուր մակերեսով,
- 2 ընդունարաններ /գործադիր տնօրենի, փոխտնօրենի/ համար 24 քառ.մ ընդհանուր մակերեսով,

- դահլիճ, ներառյալ խորհրդակցությունների սենյակ, 45 քառ.մ ընդհանուր մակերեսով,
- տեխնիկական արխիվ, 45 քառ.մ ընդհանուր մակերեսով,
- Պահեստ, ներառյալ էլեկտրասնուցման սարքերի և ակունուլյատորների մարդկոցների համար սենյակ, 42 քառ.մ ընդհանուր մակերեսով:

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Նախագիծը մշակել են ՀՀ ԱԻՆ «ՍՊԱԾ» գործակալության աշխատակիցները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

..... 2009 թվականի N Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՈՒՐՈՍԻ ԶՐԱՄՔԱՐԻ ԶԱՆԱԿՈՂՄՅԱՆ ԼԱՆՋԻ ՍՈՂԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՍԵՅՄՍԻԿ ԿՏԱՆԳԻ ԵՎ ՊԱՏՎԱՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում սեյսմիկ վտանգի բարձր մակարդակը, Տուրոսի ջրամբարի ձախակողմյան լանջի սողանքի երկրորդային սեյսմիկ վտանգի առկայությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» N 429 որոշմամբ հավանություն ստացած Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի դրույթների, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Տուրոսի ջրամբարի ձախակողմյան լանջի սողանքի երկրորդային սեյսմիկ վտանգի և պատվարի խոցելիության գնահատման միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Տուրոսի ջրամբարի ձախակողմյան լանջի սողանքի երկրորդային սեյսմիկ վտանգի և պատվարի խոցելիության գնահատման միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքների պատվիրատու ճանաչել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը:
3. Տուրոսի ջրամբարի ձախակողմյան լանջի սողանքի երկրորդային սեյսմիկ վտանգի և պատվարի խոցելիության գնահատման միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնել ըստ ժամանակացույցի՝ համաձայն հավելվածի:
4. Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացնել 800.0 հազ. դրամ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՐԶԱՊԵՏ՝

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ՏՈՒՐՈՍԻ ԶՐԱՄՔԱՐԻ ԶԱԽԱԿՈՂՄՅԱՆ ԼԱՆՁԻ ՍՈՂԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՍԵՅՄՄԻԿ ԿՏԱՆԳԻ ԵՎ ՊԱՏՎԱՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

I. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Առաջադրվող տեխնիկական պահանջները (աշխատանքների կազմը).
 - 1.1. Ուսումնասիրել տարածաշրջանի սեյսմիկ ռեժիմը, այդ թվում՝ գնահատել Տուրոսի ջրամբարի տարածքի սեյսմիկ բնութագրերը:
 - 1.2. Զննել պատվարի մարմնի ձախակողմյան սողանքային տեղամասը և նրան հարող տարածքները:
 - 1.3. Ուսումնասիրել պատվարի մարմնում և հիմքում տեղադրված չափիչ-հսկիչ սարքավորումների բազմամյա ցուցմունքների արժեքները՝ ֆիլտրացիոն իրավիճակի պարզաբանման նպատակով:
 - 1.4. Կատարել երկրաֆիզիկական ուսումնասիրություններ՝ սողանքային մարմնում և նրան հարող տարածքում սողանքի հզորությունը և սահքի մակերևույթի հայելու դիրքը որոշելու նպատակով:
 - 1.5. Կատարել երկրաֆիզիկական ուսումնասիրություններ՝ պատվարի խոցելիության գնահատման համար:
 - 1.6. Գնահատել պատվարի կայունությունը՝ սեյսմիկ ուժերի ազդեցության դեպքում:
 - 1.7. Մշակել պատվարի հուսալիության բարձրացման առաջարկություններ:
2. Նախատեսվող աշխատանքներն իրականացնել 18 ամսվա ընթացքում:
 - 2.1. Կատարված աշխատանքների հաշվետվությունը ներկայացնել հայերեն տպագրված 5 օրինակով, մագնիսական կրիչով՝ 2 օրինակ:
 - 2.2. Հաշվետվության մեջ ներկայացնել ջրամբարի պատվարի խոցելիության նվազեցման, սողանքային մարմնի կայունության բարձրացման միջոցառումների ցանկ:

II. ՆԱԽԱՀԱՇԻՎ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի արժեքը մլն դրամ	Կատարման ժամկետը
1	2	3	4
1.	<p>Արխիվային նյութերի ուսումնասիրում, այդ թվում.</p> <ul style="list-style-type: none"> • Ջրամբարի տարածքում կատարված երկրաբանական, տեկտոնական և ճարտարա-երկրաբանական հետազոտություններ; • Պատվարի տեխնիկական վիճակի վերաբերյալ հաշվետվությունների ուսումնասիրում; • Աջակողմյան սողանքի ճարտարա-երկրաբանական և ճարտարա-գեոդեզիական ուսումնասիրությունների և իրականացված հակասողանքային միջոցառումների մասին նյութերի վերլուծություն: 	0.7	09.2009-12.2009
2.	<p>Անհրաժեշտ հետազոտություններ և ուսումնասիրություններ, այդ թվում.</p> <ul style="list-style-type: none"> • Ակնադիտական զննում պատվարի մարմնում, ձախակողմյան սողանքային տեղամասում և նրան հարող տարածքներում; • Պատվարի մարմնում և հիմքում ֆիլտրացիոն իրավիճակի ուսումնասիրման նպատակով չափիչ-հսկիչ սարքավորումների բազմամյա ցուցմունքների արժեքների վերլուծություն և վերազնահատում; • Տարածաշրջանի սեյսմիկ ռեժիմի վերլուծություն, այդ թվում՝ Տոլորսի ջրամբարի տարածքի սեյսմիկ բնութագրերի գնահատում; • Երկրաֆիզիկական ուսումնասիրություններ՝ սողանքային մարմնում և նրան հարող տարածքում; • Երկրաֆիզիկական ուսումնասիրություններ՝ պատվարում 	4.2	12.2009-08.2010
3.	<p>Պատվարի կայունության գնահատում՝ սեյսմիկ ուժերի ազդեցության դեպքում (համաձայն ՀՀ սեյսմիկ վտանգի քարտեզի):</p>	0.4	08.2010-12.2010
4.	<p>Պատվարի հուսալիության բարձրացման համար (արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկի իջեցման) առաջարկությունների մշակում:</p>	0.5	01.2011-03.2011
5.	<p>Հաշվետվության կազմում, այդ թվում՝ վերին բյեֆում սողանքի ակտիվացման վտանգի գնահատում, պատվարի խոցելիության գնահատում, միջոցառումների առաջարկում</p>	0.5	03.2011-05.2011
	Ընդամենը	6.3	09.2009-06.2011

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏՈՒՆՈՐՍԻ ԶՐԱՄՔԱՐԻ ԶԱՆԱԿՈՂՄՅԱՆ ԼԱՆՋԻ ՍՈՂԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՍԵՅՄՍԻԿ ԿՏԱՆԳԻ ԵՎ ՊԱՏՎԱՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԱԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏՈՒՆՈՐՍԻ ԶՐԱՄՔԱՐԻ ԶԱՆԱԿՈՂՄՅԱՆ ԼԱՆՋԻ ՍՈՂԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՍԵՅՄՍԻԿ ԿՏԱՆԳԻ ԵՎ ՊԱՏՎԱՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

Նախագծով նախատեսված Տոլորսի ջրամբարի պատվարի խոցելիության գնահատման և Տոլորսի ջրամբարի աջակողմյան լանջի սողանքի երկրորդային սեյսմիկ վտանգի կանխարգելման միջոցառումների ծրագրերի կատարման համար պահանջվում է պետական բյուջեից 6300 հազար դրամի հատկացում, այդ թվում 2009 թվականի համար՝ 800.0 հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԱԳԵԼԴՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՏՈՒՆՈՐՍԻ ԶՐԱՄՔԱՐԻ ԶԱՆԱԿՈՂՄՅԱՆ ԼԱՆՋԻ ՍՈՂԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՍԵՅՄՍԻԿ ԿՏԱՆԳԻ ԵՎ ՊԱՏՎԱՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԿԵՐԱՐԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է ի կատարումն ՀՀ Սյունիքի Մարզում ՀՀ կառավարության արտագնա նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի փետրվարի 12-ի N 01/15/716-09 հանձնարարականի, համաձայն «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի ա), բ), գ), դ), է) կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի

«Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» N 429 որոշմամբ հավանություն ստացած Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի դրույթների, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2000 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության հարավային տարածաշրջանում սեյսմիկ ռիսկի նվազեցման առաջնահերթ միջոցառումների մասին» N 270 որոշմամբ հաստատված ցանկի 7-րդ, 9-րդ կետերի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՏՈՒՈՐՍԻ ՋՐԱՄԲԱՐԻ ՁԱԽԱԿՈՂՄՅԱՆ ԼԱՆՋԻ ՍՈՂԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՍԵՅՍՄԻԿ ԿՏԱՆԳԻ ԵՎ ՊԱՏԿԱՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱԿ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

1976 թվականին Տոլորսի ջրամբարի թասի ձախակողմյան լանջում՝ պատվարի մարմնից 15-30մ հեռավորության վրա, տեղի են ունեցել սողանքյին երևույթներ: Մեկ ամսվա ընթացքում 3 հա տարածքում ձևավորվել է հստակ արտահայտված սողանքյին մարմին, որի չափերը մոտավորապես (200x200) մետր է:

Սողանքը դեֆորմացրել է պատվարի կատարով դեպի ք. Սիսիան տանող ճանապարհը: Սողանքային տեղաշարժը տեղի է ունեցել տեկտոնական խզման տեղամասում, որը 10-30մ. խորության վրա, 25-30 աստիճան անկյան տակ հատում է պորֆիրիտային ապարները:

Ջրամբարից ջուրը ձեղքերով թափանցում է տեկտոնական գոտի և ջրհագեցնում է կավային ապարները՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ վերը նշված սողանքի ակտիվացման համար:

Վերջին 30 տարիների ընթացքում սողանքային մարմնում չեն կատարվել դիտարկումներ, չեն ուսումնասիրվել ֆիլտրացիոն պայմանները և տեկտոնական խզվածքի տեղամասում՝ պատվարի անմիջական մոտակայքում չի ուսումնասիրվել սեյսմիկ կայունությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Նախագիծը մշակել են ՀՀ ԱԻՆ «ՍՊԱԾ» գործակալության աշխատակիցները: